

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-20/12-3»**

ք. Երևան

«26» մայիսի 2020թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ.Պապիկյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը կազմում է 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է,

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 3-րդ չափաբաժնի մասով՝ 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի մասով՝ 7,000,000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ,

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 3-րդ չափաբաժնի մասով՝ 14,840,300 (տասնչորս միլիոն ութ հարյուր քառասուն հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի մասով՝ 18,002,700 (տասնութ միլիոն երկու հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ,

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է,

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ցրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկանգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ


Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024065
ՀՎՀՀ 02505554



(սպորտագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Գեղարքունիք մ/6
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829



(սպորտագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավեր ով նախա տեսվա ծ չափաբ աժնի համար ը	գնումների պլանով նախատեսվա ծ միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության			«Վ» դրամ	
			չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը/«Վ» դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
3	50111130-27	FORD TRASIT(քանակը՝ 1 հատ), FA3-A22R33(քանակը՝ 2 հատ), FA3 – C41R33 (քանակը՝ 1 հատ), տեսակի ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն Հավելված 1.1-ի	դրամ	500,000	1	Ծառայության մատուցումը՝ ք. Երևան, մատակարարի գործունեության հասցե, իսկ մատուցման արդյունքը հավաստող փաստաթղթերը՝ ք. Երևան, Կոմիտաս 49/2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25- ը
4	50111130-28	CHEVROLET CAPTIVA (քանակը՝ 1 հատ), NISSAN QASHQAI (քանակը՝ 2 հատ) տեսակի ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն Հավելված 1.1-ի	դրամ	1,500,000	1		

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան սրվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
 ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
 Կառավարական տուն, 1
 «Վ» ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011024065
 ՀՎՀՀ 02505554



(ստորագրություն)

Վ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
 ք. Երևան, Մյասնիկյան 22/4
 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
 Գեղարքունիք մ/6
 Հ/Հ 220083335012000
 ՀՎՀՀ 08417829



(ստորագրություն)

Վ.Տ.

Հ/Հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները ըստ չափաբաժինների	
		Չափաբաժին 3	Չափաբաժին 4
		FORD TRASIT, FA3-A22R33, FA3 -C41R33	CHEVROLET CAPTIVA և NISSAN QASHQAI
1	2	5	6
1	Բռնկման համակարգի ստուգում	2021	1944
2	Սառեցման համակարգի ստուգում	2021	1944
3	Յուղման համակարգի ստուգում	2021	1944
4	Արտացման համակարգի ստուգում	2021	1944
5	Կցորդման համակարգի ստուգում	2021	1944
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	2021	1944
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	2021	1944
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	2021	1944
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	2021	1944
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	2021	1944
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	2021	1944
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	2021	1944
13	ABS համակարգի ստուգում	2021	1944
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	2021	1944
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	2021	1944
16	Թափքի վիճակի ստուգում	2021	1944
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	2021	1944
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը			
1. Շարժիչ			
18	Շարժիչի հանում և տեղադրում	32344	27218
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	30323	29162
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	32344	31106
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	34366	33051
22	Շարժիչի վերանորոգում	141506	116649
23	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	6469	5832
24	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	10108	8943
25	Նույնը աջի համար (V6)	10108	9721
26	Նույնը ձախի համար (V6)	10108	9721
27	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	26280	25274
28	Նույնը աջի համար (V6)	26280	25274
29	Նույնը ձախի համար (V6)	16172	15553
30	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	7277	6999
31	Շարժիչի գլխիկի վերանորոգում	32344	27218
32	Փականի խցուկի փոխարինում	2021	1944
33	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	18194	13609
34	Նույնը V6-ի ձախի դեպքում	18194	13609
35	Նույնը V6-ի աջի դեպքում	18194	13609
36	Նույնը DOHC դեպքում	18194	13609
37	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	18194	13609
38	Հրիչի փոխարինում SOHC	3234	2333

39	Նույնը DOHC դեպքում	2830	1944
40	Ատամնավոր փոկի փոխարինում	18194	17497
41	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10108	9721
42	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	30323	25274
43	Մխոցային օդակների փոխարինում	48516	46660
44	Թափանիվի հանում և տեղադրում	14151	11665
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
45	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	3234	2722
46	Յուղի պոմպի փոխարինում	4043	3888
47	Ղեկավարման բլոկի վերանորոգում	18194	13609
48	Բռնկման կարգավորում	2021	1944
49	ՇՕ կարգավորում	2021	1944
50	խարնարակի հանում և տեղադրում	2426	2333
51	խարնարակի վերանորոգում	4043	3888
52	Օդի գտիչի փոխարինում	809	778
53	Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում	2830	2722
54	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	18194	15553
55	Բենզամղիչի փոխարինում	10108	5833
56	Վառելիքի գտիչի փոխարինում	10108	5833
57	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	10108	5833
58	Տրամյորի հանում և տեղադրում	2830	1944
59	Տրամյորի վերանորոգում	2830	1944
	3. Սառեցման և արտածման համակարգ		
60	Հովհարի փոկի հանում և տեղադրում	4043	3111
61	Հովհարի հանում և տեղադրում	10108	7777
62	Ռադիատորի հանում և տեղադրում	10108	7777
63	Նույնը կոնդիցիոների դեպքում	10108	7777
64	Ռադիատորի վերանորոգում	20215	17497
65	Թերմոստատի փոխարինում	6065	5833
66	Ջրի պոմպի փոխարինում	10108	8943
67	Ընդարձակող բաքի փոխարինում	2021	2722
68	Խլարարի հանում և տեղադրում	6065	3888
69	Նույնը DOHC դեպքում	6065	5055
70	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	4043	3888
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
71	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	10108	8943
72	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	9299	6999
73	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	16172	13609
74	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	2021	1944
75	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	2021	1944
76	ՓՏ-ի հանում և տեղադրում	22237	21386
77	ՓՏ-ի վերանորոգում	64689	54436
78	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	5256	3888
79	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	14151	13609
80	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	7277	5833
81	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	18194	13609
82	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	24258	23330
83	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	32344	31106
84	ԱՓՏ-ի վերանորոգում	141506	136091
85	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	6065	5833
86	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	6065	5833
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
87	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	12129	11665

88	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	28301	27218
89	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	8086	7777
90	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	6065	5833
91	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	6065	5833
92	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	8086	7777
93	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	8086	7777
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
94	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	32344	31106
95	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	60646	58325
96	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	24258	23330
97	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր.	10107	9721
98	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	8086	7777
	7. Կախոց		
99	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	24258	17497
100	Տրավերսի հանում և տեղադրում	16172	15553
101	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	6065	5833
102	Անվակունդի առանցքակալի փոխարինում	8086	7777
103	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	8086	7777
104	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	8086	7777
105	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	8086	7777
106	Չախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	6065	5833
107	Չախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	6065	5833
108	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	2830	2333
109	Ջսպանակի հանում և տեղադրում	2830	2722
110	Ջսպակի հանում և տեղադրում	2830	2722
111	Ջսպակի վռանների փոխարինում	4043	3888
112	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	4043	3888
113	Ներքևի լծակի հանում և տեղադրում	6065	5833
114	Ներքևի լծակի վռանի փոխարինում	4043	3111
115	Առջևի աջ կամ ձախ ձգանի հանում և տեղադրում	4043	3111
116	Միջին ձգանի հանում և տեղադրում	4043	3111
117	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	4043	3888
118	Վերևի լծակի հանում և տեղադրում	6065	5833
119	Վերևի լծակի վռանների փոխարինում	6065	5833
120	Գնդե հողակապերի փոխարինում	8086	7777
121	Ծայրականների հանում և տեղադրում	6065	5833
122	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	6065	5833
123	Առջևի կայունարարի վռանի փոխարինում	4043	3888
124	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1617	1555
125	Հետևի զսպանակի փոխարինում	4043	3888
126	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	4043	3888
127	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	6065	5833
128	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	6065	5833
129	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	6065	5833
130	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	2426	2333
131	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	2426	2333
132	Անվաբացքի կարագավորում	6065	5833
133	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	2426	1166
	8. Ղեկային մեխանիզմ		
134	Ղեկային կալունի հանում և տեղադրում	16172	11665
135	Նույնը V6-ի համար	12129	11665
136	Ղեկային կալունի վերանորոգում	56603	50548
137	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	4852	4666

138	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	6469	6221
139	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	12129	11665
140	Նույնը DOHC դեպքում	12129	11665
141	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	4043	3888
142	Նույնը DOHC դեպքում	4043	3888
143	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	6065	5833
144	Նույնը DOHC դեպքում	6065	5833
145	Նույնը կոնդիցիոների դեպքում	6065	5833
146	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	10108	9721
147	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	11320	10887
	9. Արգելակային համակարգ		
148	Գլխ. գլանի հանում և տեղադրում	12129	9721
149	Գլխ. գլանի վերանորոգում	12129	9721
150	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	8086	7777
151	Բանվ. գլանի հանում և տեղադրում	8086	7777
152	Բանվ. գլանի վերանորոգում	6065	5833
153	Արգելակային համակարգի օդահանում	3234	1944
154	Առջևի սուապորտի հանում և տեղադրում	6065	4666
155	Հետևի սուապորտի հանում և տեղադրում	6065	4666
156	Առջևի սուապորտի վերանորոգում	6065	4666
157	Հետևի սուապորտի վերանորոգում	6065	4666
158	Արգելակային փողրակի փոխարինում	3234	1944
159	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	3234	1944
160	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	3234	1944
161	Հետևի կոճղակների փոխարինում	3234	1944
162	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4043	3111
163	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4043	3111
164	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	4043	3111
165	ABS-ի հանում և տեղադրում	14151	9721
166	ABS-ի վերանորոգում	14151	11665
167	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	8086	6999
168	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	6065	3888
	10. Էլեկտրասարքավորում		
169	Էլեկտրասարքավորման վերանորոգում	10107	7777
170	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	6065	3888
171	Գեներատորի հանում և տեղադրում	6065	4666
172	Նույնը V6-ի դեպքում	6065	4666
173	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	6065	4666
174	Գեներատորի վերանորոգում	6065	3888
175	Մեկնարկիչի հանում և տեղադրում	6065	4666
176	Մեկնարկիչի վերանորոգում	6065	4666
177	Առջևի լապտերի հանում և տեղադրում	4043	2333
178	Հետևի լապտերի հանում և տեղադրում	4043	2333
179	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	4043	3888
180	Վազքաչափի հանում և տեղադրում	8086	5833
181	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	4043	3111
182	Սաքերի պանելի հանում և տեղադրում	18194	13609
183	Արագաչափի հանում և տեղադրում	8086	5833
184	Ազդանշանի հանում և տեղադրում	4043	7777
185	Ապակեվկացիչի շարժիչի հանում և տեղադրում	4043	7777
186	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	10107	6999
187	Ազդանշանային համակարգի տեղադրում	6065	3888
188	Մազնիստուլայի տեղադրում	3234	1944

189	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	7277	5833
190	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	14151	9721
191	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	14151	11665
192	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	10107	7777
193	Էլեկտրական տվիչների փոխարինում	2021	1944
194	Էլեկտրական անջատիչների փոխարինում	1213	778
195	Վառոցքի մոմի փոխարինում	3234	1944
196	Կոնդիցիոների լիցքավորում	6469	6221
197	Կոնդիցիոների վերանորոգում	2021	1944
	11. Այլ ծառայություններ		
198	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	2830	1944
199	Ավտոմեքենայի վազում	1213	972
200	Անիվի հանում և տեղադրում	606	389
201	Անվադողի վերանորոգում	2021	1944
202	Անիվի բայանսավորում	809	778
203	Անիվի վալց	2224	1944
204	CO-գողման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	2224	1944
205	Խառատային աշխատանքներ 1 ժամ	6065	3888
206	Փականագործի աշխատանքներ 1 ժամ	4043	3888
207	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	1011	972
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
	1.Շարժիչ		
1	Շարժիչի բլոկ		388831
2	Շարժիչի գլխիկ		388831
3	Բարձիկ	30323	25274
4	Շարժիչի գլխիկի միջադիր	8086	9721
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	58624	56380
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	121291	110817
7	Շարժիչի փական դուրս մղող	2830	2722
8	Շարժիչի փական ներս մղող	2830	2722
9	Շարժիչի փականի խցուկ	1213	1166
10	Ծնկաձև լիսեռ	109162	99541
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	6065	5833
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	8086	7777
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	14151	13609
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	18194	15553
15	Հենակային տափողակ	2021	1944
16	Մխոց	34366	31106
17	Մխոցային օղակներ	34366	29162
18	Ատամնանիվ	10107	5833
19	Ատամնավոր փոկ	16172	15553
20	Շղթա	24258	20219
21	Հիդրոձգան	12129	9721
22	Հրիչ	2021	1944
23	Հիդրոհրիչ	7277	6999
24	Բաշմակ	6065	5833
25	Հանգստարար	4043	3888
26	Թափանիվ	8086	7777
27	Թափանիվի պսակ	2021	1944
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	404	389
29	Շկիվ	10107	9721

30	Շարժաթև	6065	5832
31	Կարտերի միջադիր	3234	3111
32	Միջադիր	6065	5833
2. Ղեկավարման, սնման և լուղման համակարգ			
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր (Բարձր որակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան)	1819	1361
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր (Բարձր որակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան)	2021	1555
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր (Բարձր որակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան)	3234	1944
36	Յուղի գտիչ	3234	1944
37	Յուղի պոմպ	18194	17497
38	Յուղի պոմպի շարժաբեր	6065	4666
39	Յուղի ռադիատոր	18194	17497
40	Յուղի փողրակ	3234	3111
41	Յուղի ծորակ	4852	4666
43	Վառոցքի մոմ	3639	3499
44	Բենզոլբաք	36387	31106
45	Խառնարակ	1213	1166
46	Խառնարակի վերանորոգման հավաքածու	14151	11665
47	Ինժեկտորի ֆորսունկա	22237	21386
48	Վառելանյութի մղիչ էլեկտրական	38409	34606
49	Վառելանյութի մղիչ մեխանիկական	1213	1166
50	Վառելանյութի գտիչ	12129	11665
51	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	4043	3888
52	Վառելանյութի փողրակ	6065	5833
53	Աքսելերատորի ճոպան	6065	5833
54	Օդի գտիչ	6065	5832
55	Զերմաստիճանային տվիչ	14151	13609
56	Յուղի տվիչ	16172	15553
57	Բաշխիչ լիտերի տվիչ	14151	13609
58	Օդի ծախսի տվիչ	34366	29162
59	Արագաչափի տվիչ	11320	10887
60	Հովհարի տվիչ	10108	9721
61	Զրի տվիչ	8086	7388
62	Բենզոլբաքի տվիչ	8895	7777
63	Մարման ընթացքի կարգավորիչ	10714	10304
64	Մարման ընթացքի տվիչ	9016	8671
65	Ղեկավարման համակարգիչ	109162	99152
66	Պարապ ընթացքի տվիչ	10108	9721
67	Դրոսելային փականի տվիչ	9299	8943
68	Թթվածնի տվիչ	14151	12443
3. Սառեցման և արտածման համակարգ			
69	Հովհարի փոկ	10108	5832
70	Հովհար	15768	13609
71	Ուղիատոր	4043	33051
72	Ընդարձակող բաք	15364	13609
73	Ուղիատորի փողրակ	7277	5832
74	Թերմոստատ	10108	8554
75	Զրի պոմպ	26280	21386
76	Զրի պոմպի առանցքակալ	10108	8554
77	Զրի պոմպի թևակ	8086	5832
78	Սառեցման հեղուկ 1 լիտր	1617	1166
79	Զրի պոմպի սռնանիվ	1213	778

80	Հոլովակ	4043	3111
81	Փոկ	8086	5832
82	Փոկ կոնդիցիոների	4043	3111
83	Ծորակ	6065	4666
84	Խլարարի ներդիր	4043	3111
85	Խլարարի կախոց	2021	1944
86	Կրոնշտեյն	1617	1555
87	Անուր (Խամուտ)	202	194
88	Խլարար	44473	38883
89	Ռեզոնատոր	22237	19442
90	Վառարանի ռադիատոր	30323	25274
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
91	Կցորդման բանվորական գլան	18194	16331
92	Կցորդման գլխավոր գլան	18194	13609
93	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	8895	6999
94	Կցորդման տանող սկավառակ	26280	21386
95	Կցորդման տարվող սկավառակ	19407	18664
96	Կցորդման առանցքակալ	16576	13609
97	Կցորդման փողրակ	7277	5832
98	Փոխանցման տուփ		388831
99	ՓՏ-ի առջևի խցուկ	8086	5832
100	ՓՏ-ի հետևի խցուկ	8086	5832
101	ՓՏ-ի առանցքակալ	8086	5832
102	ՓՏ-ի առաջնային լիսեռ	28301	25274
103	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	26280	22941
104	ՓՏ-ի եղանիկ	20215	17497
105	ՓՏ-ի ատամնանիվ	15364	12443
106	Համաժամիչ	14151	9721
107	Մուֆտ	32344	31106
108	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	22237	13609
109	ԱՓՏ-ի գտիչ	22237	13609
110	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	38409	29162
111	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	36387	31106
112	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	4043	3111
113	ԱՓՏ յուղ, 1 լիտր	6065	4666
114	ՓՏ-ի առաջնային լիսեռ	1011	778
115	Հերմետիկ 125գր	2021	1944
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
116	Բաշխիչ տուփ		194415
117	Բաշխիչ տուփի խցուկ	14151	11665
118	Բաշխիչ տուփի առանցքակալ	34366	29162
119	Բաշխիչ տուփի ատամնանիվ	30323	25274
120	Բաշխիչ տուփի լիսեռ	48516	46660
121	Կարդանային լիսեռ	64689	60269
122	Էլաստիկ մուֆտ	18194	17497
123	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	16172	13609
124	Կարդանային լիսեռի խաչուկ	12129	9721
	6. Առջևի և հետևի կամրջակներ		
125	Հետևի կամ առջևի կամրջակ		388831
126	Ռեդուկտոր	101076	95263
127	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	16172	13609
128	Դիֆֆերենցիալ	20215	17497
129	Դիֆֆերենցիալի սատելլիտ	22237	21386

130	Տանող ատամնանիվի խցուկ	18194	17497
131	Տանող ատամնանիվի առանցքակալ	14151	13609
132	Դիֆֆերենցիալի առանցքակալ	10108	9721
133	Կիսասունի	20215	17497
134	Կիսասունու առանցքակալ	10108	9721
135	Կիսասունու միջադիր	7277	5832
136	Կիսասունու խցուկ	6065	3888
137	Կարգավորիչ տափողակ	3234	1944
	7. Կախոց		
138	Տրավերս	20215	17497
139	Կրոնշտեյն	3234	1944
140	Չախ կամ աջ հողակապ	40430	29162
141	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	8086	5832
142	Անվակուոնդ	26280	21386
143	Անվակուոնդի խցուկ	8086	5832
144	Անվակուոնդի ներքին առանցքակալ	18194	17497
145	Անվակուոնդի արտաքին առանցքակալ	14151	13609
146	Հետևի անվակուոնդի ներքին առանցքակալ	18194	17497
147	Հետևի անվակուոնդի արտաքին առանցքակալ	16172	13609
148	Չախ կամ աջ հողակապի խցուկ	8086	5832
149	Հարվածամեղմիչի թասակ	13342	10887
150	Զսպանակ	10108	9721
151	Առջևի հարվածամեղմիչ	28301	25274
152	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	6065	4666
153	Հարվածամեղմիչի վռան	1617	1555
154	Ներքևի լծակ	58624	56380
155	Ներքևի լծակի վռան	7277	6999
156	Վերևի լծակ	50538	48604
157	Վերևի լծակի վռան	4852	4666
158	Գնդե հողակապ	10108	9721
159	Առջևի կայունարար	16981	16331
160	Առջևի կայունարարի վռան	3639	3499
161	Առջևի կայունարարի առջևի վռան	1819	972
162	Հետևի զսպանակ	8895	8554
163	Հետևի ցնցամեղմիչ	19407	18664
164	Հետևի մետաղաձող (շտանգա)	14151	13609
165	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	4043	3888
166	Հետևի անկյունագծային լծակ	18194	17497
167	Անկյունագծային լծակի վռան	4447	4277
168	Զսպակ (ռեստորա)	48516	38883
169	Զսպակի վռան	7479	5832
170	Զսպակի միջադիր	7479	5832
171	Զսպակի բռնիչ	7479	5832
172	Աջ կամ ձախ ձգան	7479	7193
173	Ծայրակալ	7479	6066
174	Չզան մեջտեղի	7479	3694
175	Անվախեծ	28301	23330
	8. Ղեկային մեխանիզմ		
176	Ղեկային կալուն	101076	95380
177	Ղեկային կալունի առանցքակալ	6065	5832
178	Ղեկային կալունի խաչուկ	10108	9721
179	Հիդրոուժեղարար	28301	21386
180	Հիդրոուժեղարարի փոկ	6065	5832


181	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	10108	9721
182	Հիդրոուժեղարարի պոմպ	16172	13609
183	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	6065	5832
184	Ղեկային ձող	10108	9721
185	Ղեկային ձողի ծայրակալ	6065	5832
186	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	3639	3499
187	Ճոճանակ	16172	15553
188	Ճոճանակի վրան	6065	5832
	9 Արգելակային համակարգ		
189	Գլխ. գլան	16172	13609
190	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	6065	5832
191	Վակուումային ուժեղարար	24258	16331
192	Բանվ. գլան	14151	9721
193	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10108	5832
194	Արգելակային փողրակ	8086	4666
195	Սուպպորտի ուղղորդիչ	8086	5832
196	Սուպպորտի մանժետ	8086	4666
197	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	18194	13609
198	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	16172	12443
199	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	14151	9721
200	Առջևի արգելակային սկավառակ	22237	16331
201	Հետևի արգելակային սկավառակ	22237	16331
202	Ձեռքի արգելակի ճոպան	12129	5832
203	ABS-ի տվիչ	12129	5832
204	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	2224	972
205	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2021	1555
206	Ձեռքի արգելակի ճոպան	10108	7388
	10 Էլեկտրասարքավորում		
207	Գեներատոր	141506	103040
208	Գեներատորի դիողային կամրջակ	14151	11665
209	Գեներատորի ռելե	16172	14776
210	Գեներատորի առանցքակալ	14151	12443
210	Ստարտեր	12938	12443
211	Ստարտերի ռելե	95012	91375
212	Ստարտերի ածուխ	11725	11276
213	Բենդեքս	8895	6999
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	16172	15164
215	Առջևի լապտեր	10108	9721
216	Առջևի թարթիչ	26280	25274
217	Հետևի լապտեր	6065	5832
218	Հետևի թարթիչ	10108	9721
219	Արգելակային լապտեր	2426	1944
220	Լամպ	8086	5832
221	Էլեկտրական անջատիչ	6065	4666
222	Էլեկտրական տվիչ	3234	1944
223	Էլեկտրական չափիչ սարք	3234	2333
224	Բռնկման կողպեք	2830	2722
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	2021	1944
226	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	28301	25274
227	Վառոցքային լարերի խուրց	20215	17497
228	Վառոցքի մոմի ծայրակալ	12129	9721
229	Վազքաչափ	2021	1555

230	Վազբաչափի ճուպան	10108	7777
231	Արագաչափ	6065	3888
232	Ազդանշան	7277	5832
233	Ապակեվազիչ	4852	3888
234	Ապակեվազիչի շարժիչ	3234	1944
235	Դռների կենտրոնական փական	12129	9332
236	Ազդանշանային համակարգ	14151	13609
237	Մագնիտուլա	12129	9721
238	Էլեկտրաամբարձիչ	11320	9721
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	14151	11665
240	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	12129	8554
241	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր <i>գին 1դ/մ վերանորոգման համար</i>	7277	5832
Ընդամենը՝ մասնակցի առաջարկած հանրագումարային գին		6,000,000	7,000,000

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է՝
 SU – 1 ծառայություն / տեխ. զննում ըստ հավելվածի/,
 SU – 2 ծառայություն/ տեխ. սպասարկում և վերանորոգում ըստ հավելվածի:
1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը,
2 - տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում: Տեխսպասարկման կայանը պետք է
հագեցած լինի առնվազն 3 էլեկտրական ամբարձիչներով՝ առնվազն 3,5 տոննա բարձրացնելու կարողությամբ, անվաբացքի
ուղղման սրենդով, ինժեկտորների լվացման սրենդով, թափքի ուղղման սրենդ, չորացման, դիֆախոր: Ծառայությունները
պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա
ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ


Վարչապետի աշխատակազմ
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 Կառավարական տուն, 1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011024065
 ՀՎՀՀ 02505554



[Handwritten Signature]
 (ստորագրություն)
 Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Քի-Ռ» ՍՊԸ
 ք. Երևան, Մյասնիկյան 22/4
 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
 Գեղարքունիք մ/ճ
 Հ/Հ 220083335012000
 ՀՎՀՀ 08417829



[Handwritten Signature]
 (ստորագրություն)
 Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է՝ իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
3	50111130-27	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ (1 հատ FORD TRANSIT, 2 հատ ԴԱ3-Ա22Ր33 և 1 հատ ԴԱ3-Ը41Ր33)	-	-	-	-	-	150 000	250 000	250 000	250 000	500 000	500 000	500 000	500 000	500 000
4	50111130-28	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ (1 հատ CHEVROLET CAPTIVA և 2 հատ NISSAN QASHQAI)	-	-	-	-	-	450 000	750 000	750 000	750 000	1 500 000	1 500 000	1 500 000	1 500 000	1 500 000

* Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:
 * Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 Կառավարական տուն, 1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011024065
 ՀՎՀՀ 02505554



(ստորագրություն)
 Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
 ք. Երևան, Մյասնիկյան 22/4
 «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
 Գեղարքունիք մ/6
 Հ/Հ 220083335012000
 ՀՎՀՀ 08417829



(ստորագրություն)
 Կ.Տ.

Պայմանագրի կողմ

Գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

Գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն